ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Մ Թ Յ Ո Ւ Ն
22 հոկտեմբերի 2018 թվականի N 251-Ա

«ԳՈՐԻՍԻ ԹԻՎ 2 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 11-րդ մասի 3-րդ կետով, հիմք ընդունելով ՀՀ Սյունիքի մարզպետի 2018 թվականի հոկտեմբերի 15-ի N 248-Ա կարգադրությունը և Դ.Կոստանդյանի դիմումը՝

կ ա ր գ ա դ ր ու մ եմ.

1.2018թ. հոկտեմբերի 23-ից «Գորիսի թիվ 2 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար նշանակել Դավիթ Կոստանդյանին, ազատելով նրան «Քարաշենի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի ժամանակավոր պաշտոնակատարի պարտականություններից:

2.«Գորիսի թիվ 2 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունում հանձնում-ընդունում կատարելու համար ստեղծել հանձնաժողով հետևյալ կազմով.

Հայկ Հարությունյան	Մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչության կրթության բաժնի պետ (հանձնաժողովի նախագահ)
Տիգրան Գրիգորյան	Մարզպետարանի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության ֆինանսա-տնտեսագիտական բաժնի առաջատար մասնագետ
Արփինե Դավթյան	Մարզպետարանի աշխատակազմի իրավաբանական բաժնի գլխավոր մասնագետ:

2. Հանձնաժողովին՝ հանձնման-ընդունման աշխատանքներն ավարտել եռօրյա ժամկետում և արդյունքները ներկայացնել քննարկման:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ Հ. ՊՈՂՈՍՅԱՆ